ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 փետրվարի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

16
(2866)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՉԿԱՐՈՂԱՑԱՎ ՎԵՐԱՀՍԿԵԼ ԱՊՕՐԻՆԻ ՁԿՆԱԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ



2022 թվականին, Ազգային ակադեմիայի գնահատականով, Սեւանում եղել է 4700 տոննա Սիգ, 2023-ին՝ 3900 տոննա:

Փաստը մնում է փաստ, որ Շրջակա միջավայրի նախարարության նախարար Հակոբ Սիմիդյանը այդպես էլ չկարողացավ կատարել իրեն հանձնարարվածը եւ չվերահսկեց ապօրինի ձկնագողությունը:

Վարչապետ Փաշինյանը երեկ Կառավարության նիստում Սիմիդյանի վրա բարկացավ, ակնարկեց, որ նրան հանձնարարված աշխատանքները մնում են անկատար:

Սիմիդյանը, ի պատասխան, նշեց. «Մինչեւ 2024 թվականի սեպտեմբերի 1-ը ձկնորսները կարող են դիմել շուրջ 257 տոննա քվոտայի շրջանակներում օրինական որս իրականացնելու համար»: Սիմիդյանը տեղեկացրեց, որ 2020-21 թթ. քվոտան եղել է 300 տոննայի շրջանակներում, 2022-23 թվականին եղել է 600 տոննայի շրջանակներում:

Փաշինյանը, այս տվյալներն ավելի բացելով, նշեց. «600 տոննա քվոտայի դիմաց մենք իրացրել ենք 566.1 տոննա ձուկ: Այսինքն՝ մենք բոլորս գիտենք, որ կրկնակի ավել որս է արվում, բայց նույնիսկ այս քվոտան, որի դիմաց պետք է վճարում ապահովվեր, մենք գոնե սիգի այդ 600 տոննայի վճարը չենք կարողացել ապահովել: Սա անընդունելի բան է, բայց ավելի մեծ խնդիր է այն, որ 2023-ին այդ ցուցանիշն ավելի է նվազել, դարձել է 390 տոննա»:

Այսինքն՝ ստացվում է, որ ամեն տարի ավելացվում է Սեւան բաց թողնվող Սիգի եւ Իշխանի քանակը, սակայն տարեվերջին Սեւանում Սիգի, Իշխանի քանակը ձկնագողերի շնորհիվ կրկնակի պակասում է:

2024 թվականին «Սեւանի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման» հիմնադրամը դրամաշնորհային մրցութով Շրջակա միջավայրի նախարարությունից ստացել է 495 մլն 700 հազար դրամ:

Պայմանագրով նախատեսված է հատկացված գումարը ծախսել ձկների կերի, հատուկ մասնագիտական ծառայությունների, անհրաժեշտ նյութերի ձեռք բերման եւ այլ անհրաժեշտ ծառայությունների համար:

Նախատեսված է 3-ից 5 գրամ եւ 5-ից 20 գրամ քաշով Իշխան գեղարքունի տեսակի մանրաձուկ բաց թողնել Սեւան:

Նույն դրամաշնորհի արժեքը 2023 թվականին կազմել է 495 մլն 691 հազար դրամ, իսկ 2022 թվականին՝ 300 մլն դրամ:

Արդյունքում ստացվեց այնպես, որ, ըստ տվյալների, տարեցտարի ձկնաբուծության համար պետության կողմից տրամադրվող դրամաշնորհների քանակը կայունանում է, սակայն ավելանում է ձկնորսության եւ ձկնագողության մակարդակը: Հենց այս պատճառով էլ Փաշինյանը դժգոհ է նախարար Սիմիդյանի աշխատանքից:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հակոբ Սիմիդյանը հեռացվող նախարարների շարքին է դասվում, քանի որ Նիկոլ Փաշինյանը նրա աշխատանքից էլ է դժգոհ, ինչպես Վահան Քերոբյանի դեպում: Այս անգամ Փաշինյանը ոչ թե հեռացնելու նպատակով է հոխորտում նախարարների վրա, այլ անում է այնպես, որ նրանք ինքնակամ հրաժարական ներկայացնեն:

Փաշինյանը Սիմիդյանի հարցով կտրուկ քայլեր չի ձեռնարկում, քանի որ չի կարողանում գտնել որեւէ մեկին, ով կցանկանա աշխատել իր հետ եւ իր ղեկավարած կառավարությունում:

Ստացվում է, որ Փաշինյանի թիմը քիչ-քիչ մաշվում է, եւ պակասում են հավատարիմների շարքերը:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Զարուհի Փոստանջյանին մեղադրանք է առաջադրվել՝ Նիկոլ Փաշինյանի հասցեին հնչեցրած հայտարարությունների համար: ArmLur.am-ը գրել էր, որ դեռ երեկ Զարուհի Փոստանջյանը հրավիրվել էր Քննչական կոմիտե: Բանն այն է, որ դեռ 2021թ.-ի փետրվարի 8-ին՝ «Հայելի» մամուլի ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ, Զարուհի Փոստանջյանը հայտարարել էր, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ նրա կինը երազել են հանձնել հողերը, վերջիններս այդ մասին 2008թ. գրել են, հավաքագրվել են դրա ներքո, գործարքն անելու վերաբերյալ գումարներ են ստացել: Այս հայտարարությունների առթիվ հատուկ քննչական ծառայությունում նյութերի նախապատրաստման շրջանակներում Զարուհի Փոստանջյանը հրավիրվել էր հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու եւ բացատրություններ տալու: Դատարանը վճիռ էր կայացրել՝ պահանջելով Փոստանջյանից հերքմամբ հանդես գալ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Զարուհի Փոստանջյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՔՕ 507-րդ հոդվածով, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը: Փոստանջյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրությամբ երկրից չհեռանալը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Զարուհի Փոստանջյանն ասաց, որ պատրաստվում է բողոքարկել իրեն առաջադրված մեղադրանքը, քանի որ դատարանն այնպիսի պահանջ է ներկայացրել, որ կատարելն անհնար է. «Դատարանը պահանջել է 5000 տպաքանակ ունեցող մամուլում հերքմամբ հանդես գալ, բայց Հայաստանում այդքան տպաքանակ ունեցող թերթ չկա. ես հետաքրքրվել եմ, ինչպե՞ս կատարեմ այս պահանջը»: Ստացվում է՝ ՔՊ-ին չհաջողվեց ավագանու ընդդիմադիր անդամին մանդատից զրկել, հիմա փորձում են նրա նկատմամբ իրավական գործընթացներ սկսել: Ուշագրավ է նաեւ, որ իրավապահ համակարգը հերթական անգամ կողմնակալ մոտեցում է ցուցաբերում.օրինակ, երբ ՔՊական Լենա Նազարյանն է հրաժարվում կատարել դատարանի վճիռը ու ներողություն խնդրել ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանից նրան վիրավորելու համար, իշխանական պատգամավորը չի պատժվում դատարանի վճիռն արհամարհելու համար, մինչդեռ ընդդիմադիրների դեպքում իրավապահներն անմիջապես պատժամիջոցներ են կիրառում: Կարող ենք արձանագրել նաեւ, որ հերթական անգամ գործ ունենք ընտրովի արդարադատության հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեռ 3 տարի առաջ՝ 2021 թվականին էր՝ էկոնոմիկայի նախարարությունը չարաշահումների կասկածով հայտվել էր ուշադրության կենտրոնում: 2021 թվականին ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ կոռուպցիոն եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում կատարված ստուգողական գործողությունների արդյունքում տվյալներ են ստացվել, որ 2019թ. դեկտեմբերի 16-ին նախարարության կողմից «դաբաղ» տեսակի պատվաստանյութի ձեռք բերման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ (ՌԴ) հետ 28.02.2020թ.-ին կնքվել է պայմանագիր, որի արդյունքում գնման հայտով սահմանված 226.227.500 դրամից բացի, որպես ավելացված արժեքի հարկ, պետական բյուջե պետք է վճարվեր հավելյալ 44 մլն 474 հազար դրամ: Ըստ ստացված նյութերի՝ մատակարար կազմակերպության կողմից պատվաստանյութը սահմանված ժամկետներում չմատակարարելու պայմաններում նախարարության պաշտոնատար անձինք սահմանված կարգով չեն երկարացրել բանկային երաշխիքի ժամկետները, ինչպես նաեւ չեն կիրառել պայմանագրով սահմանված տույժերն ու տուգանքները, այլ պարզապես միակողմանի խզել են պայմանագիրը, որի հետեւանքով պետությանը պատճառվել է շուրջ 2 մլն 445 հազար դրամի վնաս: Էկոնոմիկայի նախարարությունը այս իրադարձություններից հետո դասեր է քաղել եւ պատվաստանյութը 2023 թվականին գնել է էլեկտրոնային աճուրդով «Ինովատոր» ՍՊԸ-ից: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 187 մլն 972 հազար դրամ՝ ԱԱՀ-ն ներառյալ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը երեկ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ նիստ է արել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նիստը 3 ժամից ավել է տեւել: Քննարկվել են բացառապես ներկուսակցական հարցեր, արտաքին քաղաքական հարցերը մղվել են երկրորդ պլան իշխանականների կողմից: Նիկոլ Փաշինյանն ասել է, որ պետք է մեծ թափով շարունակել մարզային ակտիվի ու տարածքային կառույցների հետ աշխատանքը, նաեւ իր թիմակիցներին հանձնարարել է ամեն ինչ անել, որ կուսակցությանն անդամակցողների թիվը շատանա: Իշխանականները նաեւ որոշել են մեդիադաշտում ակտիվանալ, հենց սրանով էլ պայմանավորված՝ Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ականները վերջին օրերին մեկը մյուսի հետեւից «տիկտոկյան» էջեր են բացել ու հոլովակներ են տեղադրում: Լրատվամիջոցների հետ նրանց աշխատանքը տապալված է, դրա համար հույսները սոցցանցերն են:

ԶՐՈՒՅՑ

«ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՉԵՂԱՐԿՎԵԼ»

ArmLur.am-ը Արցախի Ազգ պատգամավոր Մեսրոպ Հակոբյանի հետ զրուցել է բռնի տեղահանված արցախցիների՝ Արցախ վերադարձի հնարավորության, Արցախի կառավարության եւ պատգամավորների անելիքների մասին:

-Տիկին Հակոբյան, վերջին շրջանում պարբերաբար լուրեր են շրջանառվում, որ Արցախի տեղահանված բնակիչները պարբերաբար հանդիպումներ են ունենում պատգամավորների հետ, եւ այդ հանդիպումների ընթացքում քննարկվում է տեղահանված արցախցիների հետվերադարձի հարցը: Կխնդրեմ մեկնաբանել՝ նման հանդիպումների ընթացքում արդյոք այդպիսի քննարկում եղե՞լ է, ու այս տարբերակը հավանական համարո՞ւմ եք Դուք:

-Հանդիպումները պաշտոնական բնույթ չեն կրում, այսինքն՝ Ազգային ժողովի ձեւաչափով չեն: Մենք՝ որպես պատգամավորներ, անհատներ, հանդիպում ենք, եւ դա ամենօրյա ձեւաչափով է, լինում են նաեւ խմբային, այսինքն՝ պատգամավորներ եւ հանրության ներկայացուցիչներ: Մարդիկ տարբեր խնդիրներով դիմում են. գլխավոր խնդիրներից մեկը սոցիալական խնդիրն է, որ գնալով խորանում է, եւ, կարծես թե, լուծում չի ստանում, եւ բազմաթիվ անարդարություններ. մարդիկ պարզապես շահառու չեն դառնում 40+10 կամ 50-հազարականների: Ինչ վերաբերում է վերադարձին. իհարկե, ցանկացածի հետ քննարկման վերջում ամենակարեւոր հարցը հենց դա է լինում ժողովրդի կողմից, եւ բոլորը ինչ-որ ժամկետներ են նշում, մարդկանց անուններ են տալիս, որոնք իբրեւ ցուցակագրում են վերադառնալու համար: Ասեմ, որ իրականում նման գործընթաց չկա, որովհետեւ հասկանալի է՝ մեկ այլ բան է հուզական դաշտում ցանկությունը, որը բոլորիս մոտ կա, մեկ այլ բան է, որ քաղաքական առումով դա պետք է հստակ գծագրվի, նոր որեւէ գործընթաց տեղի ունենա: Այս փուլում, որ ասեմ՝ կա որեւէ արձանագրված արդյունք, չկա, կան մեր առաջարկները, մեր տարբերակները այդ ուղղությամբ, որոնք դեռեւս այդքան էլ մեծ չեն, եւ արդյունք չունենք գրանցած. կա ճնշումը Ադրբեջանի կողմից, կա ճնշումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից: Ճնշումը, պարտադիր չէ, բռնի ուժով լինի. դա նաեւ լռությունն է կամ հակառակ գործընթացը, որ տանում են Հայաստանի իշխանությունները: Մենք հստակ մեր տարբերակները նշել ենք, մեր պայմանները նշել ենք, եւ նաեւ այդ ուղղությամբ գործընթացներ են իրականանում. փաստ է արդեն կայացած հանձնաժողովը, որը գլխավորում է Վարդան Օսկանյանը, եւ որն ունի անդամներ, որոնք միջազգային հարթակներում մեր ինքնորոշման իրավունքի իրացման ուղղությամբ աշխատանքներ տանելու են, որը հնարավորություն կտա նաեւ արդարության վերականգնման:

-Այսինքն՝ այդ հանձնաժողովը քննարկում է նաեւ հետվերադարձի պայմանները:

-Սկսած 2021-ի գարնանից, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետը խոսեց Արցախի նշաձողի իջեցման մասին, հաջորդ քայլն արդեն ինքորոշման իրավունքի չեղարկումն էր հենց այս իշխանությունների ձեռամբ. միեւնույնն է, այդ ինքորոշման իրավունքը որեւէ կերպ հնարավոր չէ չեղարկել, որովհետեւ, նախ, միջազգային իրավունք է, երկրորդը՝ եթե աշխարհը այդ իրավունքը չեղարկեց, հետեւաբար փլուզվում է բուրգը հավաքական Արեւմուտքի, Եվրոպայի՝ ժողովրդավարություն, իրավունք եւ այլն: Չի կարող դա չեղարկվել. ինքը պրոբլեմ է դառնում հենց աշխարհի համար: Խնդիր է, թե ինչպես ես դա իրացնում: ՀՀ իշխանությունները ասում են՝ երբ որ դու խոսում ես ինքնորոշման իրավունքից, դու տարածքային ամբողջականության դեմ ինչ-որ գործընթաց ես իրականացնում, մասնավորապես՝ Ադրբեջանի: Այս պարագայում այդպես չէ: Ինքնորոշման իրավունքը որեւէ մեկը չի կարող չեղարկել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ՄԻՇՏ ՉԱԽՈՂԵԼ...

«Այն տրանսֆորմացիաները, որ աշխարհում տեղի են ունենում՝ թե՛ տնտեսական, թե՛ ռազմական, թե՛ դիրքային, թե խմբերը՝ որոշես պետություններ, կոլիցիաներ, միություններ, շատ բան է փոխվում աշխարհում»,- Ազ ամբիոնից հայտարարեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը:

«Այն, ինչ մենք ունեցել ենք մեր պատմության մեջ, իհարկե, կարող ենք մեղադրել բոլոր ժամանակների իշխանություններին, բայց միեւնույն ժամանակ պետք է հասկանանք՝ դա որ պահից է սկսել, ու ինչու ենք միշտ ձախողել: Միգուցե 100 տարի առաջ ինտերնետ ունենայինք, ցեղասպանություն չլիներ, մեկը մյուսին կարողանար տեղյակ պահել, թե ինչ է կատարվում: Նշանակում է՝ այդ ժամանակվա գործող կուսակցությունները լավ կազմակերպված չեն եղել: Դրանից խայտառակ պատմություն աշխարհի շատ քիչ ազգեր ունեն, որ կարող են ցեղասպանվել, ու քաղաքական մի քանի կուսակցություն լինի, չկարողանան կազմակերպել, գոնե փրկեն, գոնե դիմադրեն: Այսօր մենք չգիտեք՝ ինչ եք ուզում: Այսօր ամեն ինչ թափանցիկ է, ու այդ թափանցիկությունն էլ բերում է նրան, որ մարդու գիտակցությունը փոխվի»,- ասաց պատգամավորը:

Սուքիասյանի խոսքով՝ նոր ժամանակները բերում են նոր մտածելակերպ:

«Նոր ժամանակներում ուրիշ ուժի գործիքներ կան. մենք պետք է այդ հատվածում ուժեղանանք: Ամեն օր բարձր ձայնով բոլորին մեղադրում ենք. բոլորս էլ մեղավոր ենք, մեր ամբողջ պատմության մեջ մեր պապերն էլ են մեղավոր, որ մեզ ուժեղ պետություն չեն տվել: Ես ասում եմ՝ եթե մենք չփոխվենք, եթե նոր մտածելակեպրով չշարժվենք առաջ, եթե չմտածենք, որ ՀՀ-ն պետք է 5-10 անգամ ավելի մեծ բյուջե ունենա, մենք միշտ էլ խնդիր ենք ունենալու: Մենք միասին պետք է ամեն ինչ անենք, որ Հայաստանը զարգանա: Իհարկե, երբ կառավարման հատվածում ինչ-որ սխալ է լինում, ես ողջունում եմ, երբ այդ սխալը գտնում եք, բա ընդդիմությունը դրա համար է, դուք իշխանության չափ իրավունք ունեք, ինչ տեսնում եք, քննադատե՛ք: Բայց երբ ՀՀ-ն համեմատում ենք ձեր ժամանակվա կառավարման ժամանակների հետ, խայտառակ ձեւով տարբերվում է: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասաց՝ 2017թ.-ի ու 2023թ.-ի բյուջեները 2,5 միլիարդով տարբերվում են. հիմա ի՞նչ եք ուզում դուք: Մինչեւ հիմա, որ այդ պաշտպանական դիրքերը չեն եղել, ո՞վ է մի օր դրա համար պատասխան տալու: Ինչո՞ւ չեք ասում, որ այս ժամանակահատվածում պետք է այս-այս գործողություններն արվեր, որ մեր պաշտպանական դիքերն առավել ամրապնդեինք: Դրանք չեն արվել, որովհետեւ թալան է եղել, կաշառակերությունը խեղդում էր, որովհետեւ սահմանների մասին ոչ ոք չէր մտածում. ինչո՞ւ չեք խոսում դրա մասին»,- ասաց Խաչատուր Սուքիասյանը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ԷՍ Ո՞ՒՐ ԵՆՔ ՀԱՍԵԼ»

Օրերս արցախցի մի քանի տասնյակ նախկին դատախազներ ու դատավորներ հանդիպում էին խնդրում կառավարության ղեկավարի կամ տեղակալի հետ՝ իրենց թոշակների եւ անձնագրերի հետ կապված: Այս մասին փետրվարի 8-ին՝ «Միասին» շարժման կազմակերպած քննարկման ժամանակ, նշեց ՀՀ նախկին վարչապետ, «Ազատություն» կուսակցության ղեկավար Հրանտ Բագրատյանը:

«Ինչ-որ մի խելագար ասում է, որ արցախցիների ձեռքին գտնվողն անձնագիր չէ, նրանք պետք է անցնեն ՀՀ քաղաքացի դառնալու ընթացակարգ, եւ այդ ընթացակարգի բացակայության պատճառով այդ մարդկանց թոշակ չենք տալիս: Նրանց հետ հանդիպել էր փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը, որ ասել էր՝ սա շատ բարդ պրոբլեմ է, որը պետք է փորձեն լուծել:

Այսինքն՝ քիչ է, որ Փաշինյանը քշեց այդ մարդկանց Արցախից, եւ դա արեւմտյան ուժերի ցանկությունն էր: Ես չեմ կարող պատկերացնել մի իրավիճակ, երբ Ադրբեջանն ասում է՝ արի, ես քեզ Ադրբեջանի անձնագիր եմ տալիս, Հայաստանն ասում է՝ իմ տված անձնագիրը բե՛ր, հետ տո՛ւր: Էս ո՞ւր ենք հասել, որտե՞ղ է բարոյականությունը»,- ասաց նա:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը երեկ ընդունել է ՌԴ-ում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վաղարշակ Հարությունյանին:

«Հանդիպման ընթացքում քննարկվել են Ռուսաստանի Դաշնության տարածքում առեւտրային գործունեություն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ազգային վարորդական վկայականների հիման վրա տրանսպորտային միջոցներ վարել թույլատրելու վերաբերյալ հարցեր:

Մտքեր են փոխանակվել նաեւ հայ-ռուսական օրակարգի այլ հրատապ հարցերի շուրջ»,- հայտնել են Ռուսաստանում Հայաստանի դեսպանությունից:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ ՔԱՂԱՔՈՒՄ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար հեռացված նախագահ, ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հայտնում է. «Սույն թվականի փետրվարի 12-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Ազգային ժողովում կազմակերպել եմ «Երեւանը եւ կոռուպցիան» խորագրով աշխատանքային քննարկում:

Քննարկմանը հրավիրված են պետական եւ հասարակական սեկտորի ներկայացուցիչներ, Երեւանի ավագանու անդամներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների ներկայացուցիչներ, հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամներ...

Հետաքրքրված անձինք, որոնք կցանկանան ներկա գտնվել եւ ունեն փաստարկված ասելիք քաղաքային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ, կարող են մասնակցել քննարկմանը՝ մինչեւ փետրվարի 9-ը զանգահարելով 00374 96 506556 հեռախոսահամարով»:

ՎՃԱՐՈՂԸ՝ ՀԵՐՈՍ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հայաստանի Հանրապետության թիվ 1 հերոսը աշխատող եւ հարկ վճարող քաղաքացին է:

Նրա վճարած հարկերի շնորհիվ են կառուցվում եւ գործում դպրոցները, կառուցվում մանկապարտեզները, ճանապարհները, ջրագծերը:

Նրա վճարած հարկերի շնորհիվ են աշխատավարձ ստանում բոլոր ուսուցիչները, բոլոր զինվորները, սպաները, գեներալները, բոլոր դիվանագետները:

Նրա վճարած հարկերի շնորհիվ են պահպանվում եւ վերականգնվում պատմամշակութային հուշարձանները:

Նրա վճարած հարկերի շնորհիվ է ձեռք բերվում սպառազինություն եւ տեխնիկա, ինժեներական աշխատանքներ կատարվում սահմանին:

Նրա վճարած հարկերի շնորհիվ է սնվում, հագնվում զինվորը: Նրա վճարած հարկերի շնորհիվ են թոշակ ստանում թոշակառուները, նպաստ ստանում նպաստառուները, առողջապահական ծառայություններ ստանում հարյուր հազարավոր մարդիկ, ում ստացած ծառայությունների դիմաց վճարում է պետական բյուջեն, եւ այս վճարումների շնորհիվ են աշխատում առողջապահական հիմնարկները՝ բժշկական կենտրոնները, պոլիկլինիկաները եւ ամբուլատորիաները: Աշխատող եւ հարկ վճարող քաղաքացին 2023 թվականին աշխատել եւ պետական բյուջե է վճարել 2 տրիլիոն 222 միլիարդ դրամի հարկեր եւ տուրքեր, ինչը, 2017 թվականի համեմատ, ավել է 1 տրիլիոն 64 միլիարդ դրամով (շուրջ 2.6 միլիարդ դոլարով) կամ 92 տոկոսով»:

ԿԱ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԻ ԻՄ ԽԱՉԸ ԾԱՆՐ Է». Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարեց, որ Հայաստանում բազմաթիվ բաղաքացիներ դժգոհ են դատական համակարգի աշխատանքից: Ալեն Սիմոնյանն այդ մասին ասել է ԱԺ նիստում՝ դիմելով Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանին:

ԱԺ նախագահը նշեց, որ զրպարտության եւ վիրավորանքի վերաբերյալ հայցերով բազմաթիվ վճիռներ են կայացվում, սակայն դատարանները, համաձայն լինելով, որ տեղի է ունեցել վիրավորանք կամ զրպարտություն, միեւնույն ժամանակ խուսափում են փոխհատուցման մեծ չափ սահմանելուց: «Խոսքը պատասխանող կողմին հնարավորինս շատ ծանր իրավիճակում դնելու մասին չէ, բայց կա մեկ այլ ծայրահեղություն, երբ փաստաբանի ծախսը, պետական տուրքի ծախսը չի փոխհատուցվում»,-ասաց Սիմոնյանը:

ԱԺ նախագահը նշեց, որ բազմաթիվ այդպիսի գործեր կան նաեւ իր կողմից ներկայացված հայցերի դեպքում, երբ դատարանը փոխհատուցման նվազագույն շեմն է սահմանում: Նա ԲԴԽ նախագահին հարցրեց, թե ինչ դիրքորոշում ունի այս հարցի վերաբերյալ:

ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը նշեց, որ ԱԺ նախագահին առնչվող գործերի հետ կապված գնահատականներից զերծ կմնա, որ դա որեւէ կերպ չընկալվի որպես ԲԴԽ-ից ճնշում դատավորների վրա: ԱԺ նախագահն էլ արձագանքեց. «Ցավոք սրտի, երեւի իմ խաչը ծանր է: Հայաստանում գրեթե թեմա չկա, որի հետ ես կապ չունեմ, բայց հասկանում եմ, որ Դուք չեք կարող պատասխանել Ձեր իսկ կողմից նշված պատճառով»:

Այնուամենայնիվ, Կարեն Անդրեասյանը տեսական վերլուծություն արեց. «Դատավորն ունի հայեցողության շրջանակ, ընդ որում՝ այդ հայեցողության շրջանակն իրեն տվել եք դուք՝ օրենսդիրը: Ամեն անգամ դատարանն ինքն է որոշում, թե տվյալ դեպքում խոսքի ազատությունը չարաշահող սուբյեկտը, իր ֆինանսական վիճակից ելնելով, ինչ պատասխանատվության պետք է ենթարկվի: Կարելի է այդ ներքին շեմի որոշակի հստակեցումներ տալ օրենսդրությամբ, որը կօգնի դատարանին ավելի ճիշտ կողմնորոշվել իր հայեցողության շրջանակում»:

Ըստ ԲԴԽ նախագահի՝ դա կարող է անել նաեւ Վճռաբեկ դատարանը: Անդրեասյանը վստահեցրեց, որ ինքը, ԲԴԽ-ն պատրաստ են հանդիպել ԱԺ բոլոր խմբակցությունների հետ՝ քննարկելու այդ հարցեր: Նա նկատեց՝ ԱԺ դահլիճում անընդհատ հնչում են հարցեր, դժգոհություններ, մտահոգություններ՝ կապված դատական համակարգի հետ:

«Այո, դատական համակարգից, բնական է, կա դժգոհություն, կա դժգոհություն ոչ միայն իմ, այլ նաեւ մեր բազմաթիվ քաղաքացիների կողմից»,-արձագանքեց Ալեն Սիմոնյանը:

ԱԺ նախագահը կրկնեց Արդարադատության նախարարի այն միտքը, որ այն բոլոր դեպքերում, երբ դատավորների գործողությունների հետ կապված կան մտահոգություններ, կա նաեւ հնարավորություն քննարկման դնել այդ գործողությունը: Ալեն Սիմոնյանն ընդգծեց, որ քաղաքացիները պետք է այդ հնարավորությունից օգտվեն: «Դատավորները նույնպես պետք է իմանան, որ իրենց որեւիցե որոշում՝ անկախ նրանից, թե դա ում է վերաբերում, չի անտեսվելու, մեր քաղաքացիներն այդ որոշումների հետեւից գնալու են»,-նշեց Սիմոնյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ-ԵՄ

«ՄԻՋԱՆՑՔԱՅԻՆ» ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ

Հաագայում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը փետրվարի 7-ին կլոր-սեղան քննարկման է մասնակցել Նիդերլանդների Թագավորության հեղինակավոր վերլուծական կենտրոններից մեկում՝ «Կլինգենդայլ» միջազգային հարաբերությունների ինստիտուտում: Քննարկմանը ներկա են եղել փորձագիտական շրջանակների ներկայացուցիչներ եւ լրագրող-վերլուծաբաններ:

Քննարկման ընթացքում նախարար Միրզոյանը հանգամանալից ներկայացրել է Հարավային Կովկասում առկա անվտանգային իրավիճակը, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվել խաղաղության պայմանագրի նախագծի շուրջ բանակցությունների ընթացքին. նախարար Միրզոյանը նշել է մի կողմից՝ նախագծի համաձայնեցման ուղղությամբ ՀՀ կողմից իրականացված քայլերն ու առաջարկները, մյուս կողմից՝ Ադրբեջանի՝ գործընթացը ձգձգելու եւ առավելապաշտական նկրտումները:

«Նախարար Միրզոյանը շեշտել է տարածքային ամբողջականության աներկբա ճանաչման եւ Ալմա-Աթայի հռչակագրի ու ԽՍՀՄ ԳԾ ամենաթարմ լեգիտիմ քարտեզների հիման վրա սահմանազատման հետագա գործընթացի համար առավելագույն որոշակիության ապահովման անհրաժեշտությունը: Տարածաշրջանային տրանսպորտային ու տնտեսական կապուղիների ապաշրջափակման համատեքստում ՀՀ արտաքին գործերի նախարարն ընդգծել է «միջանցքային» որեւէ տրամաբանության անընդունելիությունը ՀՀ համար եւ բազմիցս հնչեցրած պատրաստակամությունն ապահովել անհրաժեշտ դյուրացված մեխանիզմներ, որոնք կգործեն բացառապես ՀՀ ինքնիշխանության ու իրավազորության ներքո: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» հայեցակարգին, այն է՝ Հյուսիսը Հարավի եւ Արեւելքը Արեւմուտքի հետ կապող արդյունավետ ուղիների ու պայմանների ստեղծմանը՝ նաեւ որպես Հարավային Կովկասում կայունության ապահովման յուրովի երաշխիք»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ նախարար Միրզոյանը նաեւ պատասխանել է ներկաներին հետաքրքրող հարցերի: Անդրադառնալով ՀՀ-ԵՄ գործընկերության խորացմանը՝ նախարարը նշել է, որ եվրոպական ինտեգրացիոն կառույցի հետ ՀՀ հարաբերությունները հիմված են ընդհանուր արժեքների եւ ժողովրդավարական սկզբունքների վրա, ներառում են ՀՀ-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի արդյունավետ կիրարկումը, ինչպես նաեւ համագործակցության նոր ուղղությունների զարգացումը:

Նշվում է, որ նախարար Միրզոյանն անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից էթնիկ զտման հետեւանքով իրենց հայրենիքից բռնի տեղահանված հայ բնակչության կարիքների եւ իրավունքների հասցեագրման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացված քայլերին:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ՊԱՅԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Փետրվարի 8-ին առեղծվածային դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 00:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Ջրվեժ թաղամասում պայթյուն է տեղի ունեցել, եւ կան վիրավորներ:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Սեւան Քոչարյանը, վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Խորեն Բարխոյանը, նույն վարչության քրեական հետախուզության բաժնի պետ Արթուր Հակոբյանը:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի օպերատիվ խումբը՝բաժնի պետ Վարդան Խաչատուրյանի գլխավորությամբ:

Մինչ ոստիկանների ժամանումը դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի պարեկները՝ վաշտի հրամանատար Վահագն Կարապետյանի գլխավորությամբ:

Տարածքը տեղում սահմանազատել են նույն վաշտի պարեկ Վարշամ Հովհաննիսյանն ու կրտսեր պարեկ Հովհաննես Աբրահամյանը:

Պարզվել է, որ նշված վայրից «պայթյունաբեկորային բազմաօրգան վիրավորում» ախտորոշմամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 2 քաղաքացի:

Նրանց առաջինը օգնության են հասել քաղաքացիները, Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խմբերն ու պարեկները:

Տեղում պարզվել է, որ տարածքը ոչ թե Կոտայքի մարզի վարչական շրջանում է, այլ Երեւանում, ինչի կապակցությամբ դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գումարտակի հրամանատար Արմեն Գասպարյանի գլխավորությամբ:

Ահազանգով ժամանել են նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի խումբը՝բաժնի պետի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, ոստիկանության Նոր Նորքի բաժնի եւ ՊԾ Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի պարեկները պարզել են, որ հիվանդանոց տեղափոխվածներն են Երեւանի բնակիչ 48-ամյա Կարեն Գ.-ն եւ Լոռու մարզի բնակիչ 36-ամյա Միխայել Մ.-ն:

Ըստ նախնական տեղեկությունների՝ Mitsubishi մակնիշի ավտոմեքենան ժամը 00:10-ի սահմաններում երթեւեկել է Թեւոսյան փողոցով, ապա ավտոմեքենան կայանել է նշված փողոցի 4-րդ հասցեի մոտ, որից րոպեներ անց մեքենայի սրահում դեռեւս անհայտ հանգամանքներում տեղի է ունեցել պայթյուն, ինչի հետեւանքով Կարեն Գ.-ն եւ Միխայել Մ.-ն մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ երեկ՝ ժամը 06:10-ի սահմաններում, նշված բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվում ոստիկանության Նոր Նորքի բաժին, որ վիրավոր Կարեն Գ.-ն վերակենդանացման բաժանմունքում, գիտակցության չգալով, մահացել է:

Դեպքի փաստով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում սպանության փորձ հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Mitsubishi ավտոմեքենայի մեջ ոստիկաններն ու քննիչները հայտնաբերել են արնանման հետքեր, պայթյունի մի ահագին հատված, ինչպես նաեւ նռնակի պարագա, որը հավաբար պայթյունի հետեւանքով է մնացել ավտոմեքենայում:

Ավտոմեքենայից դուրս նույնպես հայտնաբերվել են արնանման հետքեր:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վիրավոր Միխայել Մ.-ն նախկինում եղել է դատապարտված, Կարեն Գ.-ն եւս մեկ այլ քրեական գործով անցնում էր (սպանության սպառնալիք):

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔ

ԱՂՋԻԿԸ՝ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵԶՐԱԳԾԻՆ

Փետրվարի 8-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 14:40-ի սահմաններում մի քանի քաղաքացիներ Դավիթաշենի կամրջի վրա կանխել են երիտասարդ աղջկա ինքնասպանության փորձը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, քաղաքացիները այդ պահին կամրջով անցնելիս են եղել, երբ նկատել են, որ այդ աղջիկը անցել է կամրջի վտանգավոր եզրագիծը:

Տեղում նրանք կարողացել են մեծ դժվարությամբ նրան դուրս բերել անվտանգ վայր, ապա ահազանգով ժամանել են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի եւ ավագ պարեկ Արարատ Պետրոսյանի գլխավորությամբ:

Օպերատիվորեն ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Երեւանի թիվ 13 հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ, ինչպես նաեւ ՓԾ փրկարար-հոգեբանը:

Երբ քաղաքացիները այդ աղջկան դուրս են բերել անվտանգ վայր, ժամանած փրկարար-հոգեբանը հոգեբանական աջակցություն է ցուցաբերել նրան, ում այնուհետեւ պարեկների ուղեկցությամբ մոտեցրել են օպերատիվորեն ժամանած Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խմբին:

Այս պահին ինքնասպանության փորձ կատարողը գտնվում է փրկարար-հոգեբանի, պարեկների եւ բժիշկների հսկողության տակ:

Ժամանել են նաեւ ոստիկանության Մաշտոցի բաժնի եւ ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքի հերթապահ խմբերը:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ինքնասպանության փորձ կատարողը Արարատի մարզի բնակիչ 23-ամյա Հերմինե Խ.-ն է:

Դեպքի փաստով ոստիկանության Մաշտոցի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվում, որոնք փոխանցվում են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԸ՝ ՓՈՇՈՒ ՄԵՋ

Ո՞Վ Է «ԴԱԲՌՈՆ» ՏՎԵԼ

Փաստաբան Ռաֆֆի Ասլանյանն ահազանգում է. «Երեւան քաղաքում համատարած կերպով տեղադրված ապօրինի, բնակչության կյանքի ու առողջության համար վտանգավոր բետոնհանգույցներն ապամոնտաժելու փոխարեն՝ ՀՀ ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանը երեկ հայտարարեց, որ ինքնակամ շինությունների օրինականացման համար այլեւս չպետք է ընդառաջել քաղաքացիներին, այսինքն՝ քանդելու ակնարկ արեց: Այդ դեպքում երկրի ղեկավարն ու Երեւանի քաղաքապետարանը ինչպե՞ս կպարզաբանեն Երեւան քաղաքի տարբեր շինհրապարակներում ապօրինի տեղադրված այդ բետոնհանգույցների խնդիրը, որոնց շահագործման արդյունքում ողջ քաղաքը փոշու մեջ կորած է, բնապահպանական, առողջապահական լուրջ խնդիրներ են առաջանում, դրան գումարած՝ նաեւ շինարարական անվտանգության նորմերի հնարավոր անտեսումը:

Շինարարներն իրենց գերշահույթի համար թիրախ են դարձրել հանրության առողջությունն ու կյանքը, իսկ իրավասու կառույցները դեռ լռում են, ինչը բացահայտ կոռուպցիոն ռիսկ է պարունակում: Ո՞վ է այսպիսի անօրինական, բնակչության համար վտանգավոր «դաբռոն» տվել, ինչի՞ արդյունքում: Բետոնհանգույցները, լինելով բարձր աստիճանի (IV) ռիսկայնություն դասակարգում ունեցող արտադրական օբյեկտներ, ոչ միայն չունեն առանձին շինթույլտվություն, տեղադրված են ոչ արտադրական նշանակության հողամասերի վրա, այլեւ դրանք ներառված չեն տվյալ շենքի շինարարության թույլտվության մեջ՝որպես տեխնոլոգիական հանգույց, գոնե դրա նախագծային փաստաթղթերի լրակազմում չեն անցել որեւէ տեսակի, ներառյալ ՇՄԱԿ փորձաքննություն, դրանց ողջ քիմիական արտանետումներն ու արգասիքները, այդ թվում՝ հեղուկի տեսքով, դուրս են գալիս արտաքին միջավայր՝ քաղաքի տարբեր թաղամասերում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի ուժով ինքնակամ շինություն համարվող այդպիսի վտանգավոր արտադրական օբյեկտների՝ բետոնհանգույցների թիվը Երեւան քաղաքում մի քանի տասնյակի է հասնում, իսկ կոռուպցիայի դեմ «պայքարող» պարոնայք իշխանավորները խոսում են քաղաքացիների, իրենց հորինած «հպարտ» քաղաքացիների կողմից դեռեւս տարիներ առաջ կառուցված թեկուզ անօրինական, բայց անվնաս, փոքր շինությունները քանդելու մասին»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 7-ից 8-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 72 դեպք, որոնցից 9-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ՉԵՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼ

Հունվարի 16-ին Բերդ համայնքի Տավուշ գյուղի մշակույթի տանը տեղի են ունեցել Տավուշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող «Ծաղկավան» մարմարացված կրաքարերի հանքավայրի «Խոսկան-Քար» տեղամասում 20 տարի ժամկետով «Մարմարիկս» ՍՊԸ-ին մարմարացված կրաքարերի հանքավայրի արդյունահանման թույլտվության ստացման վերաբերյալ հանրային լսումներ: Դրանց մասնակցել են Բերդ խոշոր համայնքի ղեկավարի տեղակալները, խորհրդականները, Բերդ համայնքի վարչական բնակավայրերի ղեկավարները, համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի ավագանու անդամներ, ՀԿ-ների ղեկավարներ, «Մարմարիկս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ: «Մարմարիկս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Շահեն Խաչատրյանը ներկայացրել է մարմարացված կրաքարերի հանքավայրի արդյունահանման նախատեսվող ծրագիրը: Հանրային լսումների մասնակից՝ Տավուշ գյուղի բնակիչների բացարձակ մեծամասնությունը դեմ է արտահայտվել մարմարացված կրաքարերի հանքավայրի արդյունահանման ծրագրին՝ նշելով, որ հանքավայրը շատ մոտ է գտնվում գյուղի բնակելի տներին, խաղողի այգիներին, մշակովի տնամերձ հողատարածքներին եւ արոտավայրերին, հանքավայրի տարածքում են գտնվում չորս ջրաղբյուրներ, որտեղից օգտվում են մոտակա թաղամասի բնակիչները: Բնակիչները մտահոգություն են հայտնել, որ հանքավայրի շահագործման հետեւանքով կաղտոտվի շրջակա միջավայրը՝ վտանգի տակ դնելով ջրային ռեսուրսները, բնությունը եւ կենդանական աշխարհը, էական վնաս հասցնելով բնակիչներին: Տավուշ գյուղի բնակիչները առաջարկել են մարմարացված կրաքարերի հանքի շահագործման թույլտվություն ստանալ Տավուշ գյուղից հեռու տարածքում, քանի որ նույն քարի հանք կա «Շար-Քար» տեղամասում, որը առավել անվնաս հեռավորության վրա է բնակավայրից: Հունվարի 22-ին Բերդ համայնքի ավագանու նիստում քվեարկության է դրվել Բերդ խոշորացված համայնքի Տավուշ բնակավայրում գտնվող «Խոսկան-Քար» հանքային դաշտի տարածքում 20 տարի ժամկետով մարմարացված կրաքարերի պաշարների արդյունահանման համար համաձայնություն տալու հարցը: Քվեարկության արդյունքում ավագանու անդամներից 8-ը կողմ է եղել, 8-ը՝ դեմ համաձայնություն տալուն, այսինքն՝ համաձայնություն տալու առաջարկը ավագանու կողմից չի ընդունվել: Բերդ համայնքից տեղեկացա, որ «Մարմարիս» ՍՊԸ սեփականատերը Վարդան Աթոյանն է. նա «Երկրապահ» կամավորականների միության Բերդի տարածաշրջանի մասնաճյուղի վաղամեռիկ նախագահ Հրաչիկ Աթոյանի (որը հայտնի է Չառլի մականունով) որդին է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՊԱՏՇԱՃ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԿԱՐԺԱՆԱՆ

Փոփոխություններ են տեղի ունեցել «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների կարգավիճակի վերաբերյալ:

ՊԵԿ-ը ներկայացնում է՝ ինչ է ենթադրում նոր ընթացակարգը.

Այսպես, նշվում է, որ առ այսօր ԵԱՏՄ տարածքից ՀՀ տարածք տեղափոխվող ապրանքների վերաբերյալ տարանցման հայտարարագրում ոչ ճշգրիտ տեղեկությունների բացահայտման դեպքերով հարուցված վարչական վարույթների ընթացքում, եթե չի ապացուցվել խնդրո առարկա ապրանքների՝ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով տեղափոխվելու ընթացքում բեռնաթափման, փոխաբեռնման, այլ բեռնային գործողությունների ենթարկված լինելու կամ մաքսային ապահովման միջոցները վնասված լինելու փաստը, ապա կոմիտեի կողմից կիրառվել է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի 1-ին մասը՝ վարչական պատասխանատվություն՝ «նախազգուշացում», իսկ ապրանքները համարվել են միության ապրանքի կարգավիճակ ունեցող:

«Նշված մոտեցումը համապատասխան ապրանքներ տեղափոխողների մոտ հանգեցրել է կարգապահության թուլացման եւ հնարավոր չարաշահումների տեղիք է տվել: Հետեւաբար, Պետական եկամուտների կոմիտեն, հաշվի առնելով ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-րդ հոդվածի 5-րդ, 307-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերը, առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հայտարարում է, որ ԵԱՏՄ տարածքից ՀՀ տարածք տեղափոխվող ապրանքների վերաբերյալ տարանցման հայտարարագրում ոչ ճշգրիտ տեղեկությունների բացահայտման դեպքերով իրականացվող վարչական վարույթների ընթացքում այսուհետ կիրառվելու են հետեւյալ մոտեցումները՝

խնդրո առարկա ապրանքները չեն ճանաչվի որպես միության ապրանք, եթե առանց մաքսային մարմնի թույլտվության Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում բեռնաթափվել, փոխաբեռնվել (վերաբեռնվել) եւ դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողություններ են կատարվել, կամ փոխադրող տրանսպորտային միջոցն է փոխարինվել, բացառությամբ այն դեպքերի, երբ այս գործողություններն իրականացվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով:

Այն պարագայում, երբ Միության անդամ երկրից ՀՀ տեղափոխված ապրանքները չեն համապատասխանի այդ ապրանքների վերաբերյալ տարանցման հայտարարագրին (օրինակ՝ կներմուծվի հայտարարագրված ապրանքից տարբերվող ապրանք, կամ կլինեն չհայտարարագրված ապրանքներ, կամ ներմուծված ապրանքի քաշը կամ քանակն ավելի կլինի հայտարարագրված քաշից կամ քանակից եւ այլն), եւ դա կհանգեցնի այդ ապրանքների վերաբերյալ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված հայտարարագրի բացակայության, այդ ապրանքները չեն համարվի Միության ապրանքի կարգավիճակ ունեցող, ուստի նման պայմաններում դրանք ենթակա կլինեն ձեւակերպման որպես երրորդ երկրի ապրանք:

Սահմանված կարգով որպես երրորդ երկրի ապրանք չձեւակերպվելու դեպքում դրանք ենթակա կլինեն արգելապահման:

Միաժամանակ, կոմիտեն տեղեկացնում է, որ իրականացվող վարչական վարույթի ընթացքում տնտեսվարողը զրկված չի լինի խնդրո առարկա ապրանքները Միության ապրանքի կարգավիճակ ունենալու վերաբերյալ այլ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, որոնք պատշաճ գնահատականի կարժանանան ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳՈՒՄ ԵՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԱՑՈՒՄ

2023թ. Արցախի հայաթափումից հետո, ՀՀ կառավարության որոշմամբ, բռնի տեղահանված արցախցիներին տրամադրվում է 40+10 հազար դրամական աջակցություն, սակայն որոշ արցախցիներ դեռ շարունակում են չստանալ անգամ հոկտեմբեր ամսվա իրենց հասանելիք աջակցությունը:

ArmLur.am-ին ահազանգում են նաեւ այն մասին, որ այն անձինք, որոնք ստացել են եւ՛ 100 հազար միանվագ, եւ՛ վեցամսյա ժամկետով տրամադրվող 40+10 հազար հոկտեմբեր ամսվա դրամական աջակցությունը, նրանք էլ շարունակում են չստանալ նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին հատկացվող 40+10 հազար դրամ աջակցությունը, որը նախատեսված է բնակարանների վարձերի եւ կոմունալ ծախսերի համար:

ArmLur.am-ը գրություն է հղել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ պարզելու աջակցությունների ուշացման պատճառը, եւ թե երբ է կատարվելու փոխանցումը, որը նախատեսված է տան վարձերի եւ կոմունալ ծառայությունների վճարման համար:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից մեզ պատասխան նամակով տեղեկացրին, որ ընթացքի մեջ են Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված հայրենակիցների սոցիալական աջակցությանն ուղղված 3 ծրագրերը՝ առաջնային կարիքների բավարարման համար 100 հազար դրամ միանվագ աջակցություն, կոմունալ ծախսերի եւ ժամանակավոր կացարանների վարձավճարների համար վեցամսյա 40+10 հազար դրամ աջակցություն, սպառողական ծախսերի համար երկամսյա 50 հազար դրամ աջակցություն:

«Բոլոր ծրագրերով վճարումները շարունակվում են: 2024թ. փետրվարի 5-ի դրությամբ վճարումները պատկերը հետեւյալն է՝

100 հազար դրամ աջակցության ծրագրի շրջանակում՝ 112 765 անձ, որից 80 535 չափահաս, 32 230՝ անչափահաս,

40+10 հազար հոկտեմբեր ամսվա համար՝ 107 942 անձ,

40+10 հազար ծրագրի շրջանակում նոյեմբեր ամսվա համար՝ 83 971 անձ,

40+10 հազար ծրագրի շրջանակում դեկտեմբեր ամսվա համար՝ 90 069 անձ,

40+10 հազար ծրագրի շրջանակում հունվար ամսվա համար՝ 95 742 անձ,

50 հազար ծրագրի շրջանակում նոյեմբեր ամսվա համար՝ 77 409 անձ,

50 հազար ծրագրի շրջանակում դեկտեմբեր ամսվա համար՝ 83 601 անձ»,- գրության մեջ նշել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության մամուլի քարտուղար Ջառա Մանուչարյանը՝ հավելելով, որ 40+10 հազար դրամ սոցիալական ծրագրի շրջանակում հունվար ամսվա աջակցության վճարումն արդեն ընթացքում է, եւ հունվար ամսվա վճարման գործընթացը կամբողջացվի մինչեւ փետրվարի 7-ը:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

SS

ՆՈՐ ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել եւ մարզպետի շնորհակալագրով խրախուսել է «Tesvan» ՍՊԸ-ի կողմից Սեւան համայնքի 9-12-րդ դասարանցիների եւ Սեւանի բազմագործառութային պետական քոլեջի ուսանողների միջեւ անցկացված մրցույթի եզրափակիչ փուլի հաղթողներին:

Սեւան քաղաքում 2019 թվականին հիմնադրված՝ որակի ապահովման ծառայություններ մատուցող «Tesvan» ընկերության նպատակն է նպաստել SS ոլորտի զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, աջակցել ոլորտով հետաքրքրված անձանց՝ սկսելու սեփական կարիերան: Ընկերությունը պարբերաբար կազմակերպում է SS ոլորտի անվճար դասընթացներ երիտասարդների համար՝ շարունակելով բացահայտել նոր տաղանդների եւ ճանաչելի դարձնել Սեւանը որպես տեխնոլոգիական քաղաք:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի աջակցությամբ 2023 թվականի դեկտեմբեր ամսին կայացել է մրցույթի առաջին փուլը, որին մասնակցել են Սեւան համայնքում գործող մարզային ենթակայության 13, մեկ ավագ դպրոցի 9-12-րդ դասարանների եւ Սեւանի բազմագործառութային պետական քոլեջի սաները: Վերջիններիս տրվել է 30 հարցից բաղկացած թեստային առաջադրանք՝ նրանց տրամաբանական կարողությունները բացահայտելու նպատակով:

Առաջին փուլը հաջողությամբ հաղթահարած 30 մասնակից հնարավորություն է ստացել մասնակցելու մրցույթի երկրորդ փուլին:

Արդյունքում հաղթող 3 մասնակիցները «Tesvan» ՍՊԸ-ի կողմից ստացել են համակարգիչներ, իսկ մյուս մասնակիցներն արժանացել են խրախուսական նվերների:

Երկրորդ փուլ անցած 30, ինչպես նաեւ լավագույն արդյունք ցուցաբերած եւս 10 մասնակցի հետ ընկերությունն արդեն իրականացնում է ոլորտին վերաբերող վերապատրաստումներ՝ օգնելով նրանց SS ոլորտում մասնագիտանալու եւ կարիերան սկսելու հարցում:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը մրցույթի կազմակերպիչների եւ հաղթողների հետ հանդիպմանը լսել է նրանց կարծիքներն ու առաջարկությունները, ներկայացրել իր տեսլականը՝ ծրագրի շարունակականությունն ու ընդլայնումն ապահովելու ուղղությամբ:

«Շնորհակալ եմ մրցույթի կազմակերպիչներին, մասնակիցներին եւ հաղթողներին, քանի որ նման մրցույթ-ծրագրի իրականացումը մեր կրթական հաստատություններում առայժմ միակն է, եւ կցանկանայի, որ այն ընդգրկեր նաեւ մարզի մյուս համայնքների դպրոցները:

Այդ նպատակի իրականացման համար ուզում եմ վստահեցնել, որ մարզպետի աշխատակազմը կցուցաբերի բավարար աջակցություն: Ցանկալի կլինի, որ ծրագրի հաղթողներն այցելեն մեր մարզի մյուս համայնքների դպրոցներ, ներկայացնեն իրենց ձեռքբերումները համակարգչային գիտելիքների ոլորտում, ոգեւորեն եւ ճիշտ ուղղություն ցույց տան աշակերտներին»,- նշել է մարզպետ Կարեն Սարգսյանը:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Մատենադարանի թանգարանում տեղի ունեցավ բարերար Վահե Քադալյանի կողմից ձեռագրերի կազմերի 3D ձեւաչափով սքանավորման սարքի նվիրաբերության արարողությունը:

Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանն այդ առթիվ նշեց, որ հին ձեռագրերի ու փաստաթղթերի պահպանման եւ ուսումնասիրման կենտրոնում շարունակվում է կարեւորագույն, ռազմավարական նշանակություն ունեցող գիտատեխնիկական բաժինների վերազինման եւ արդիականացման գործընթացը:

«Մասնավորապես, թվայնացման բաժինը ձեռք է բերել եռաչափ սքանավորման սարք, որը մեր իրականության մեջ, գոնե՝ թանգարանային հատվածում, անանախադեպ է, եւ միայն պեղումների ու հնագիտական արժեքների ոլորտում է գերմանացի մասնագետների աջակցությամբ կիրառվել տվյալ սարքը: Մենք ստացանք բացառիկ հնարավորություն ի վերջո մեր ձեռագիր մատյանների արծաթե եւ այլ բաղադրություն ունեցող կազմերի վերաբերյալ ունենալ խորքային ուսումնասիրության հնարավորություն՝ ստեղծելով կազմերին առնչվող տվյալների բացառիկ շտեմարան: Դա կարեւոր է ոչ միայն գործնական-կիրառական, այլեւ ռազմավարական տեսակետից, քանի որ մասնավոր հատվածի հետ մեր համագործակցությունը լավատեսության, դրական տրամադրությունների աղբյուր է: Մատենադարանը յուրաքանչյուր հայի համար սրբավայր է, գերակա արժեք, հետեւաբար յուրաքանչյուրի ներդրումն ու բարեգործական քայլը գտնում է հանրային լայն արձագանք»,- նշեց Խզմալյանը:

Նրա հավաստմամբ՝ մասնավոր սեկտորի հետ համագործակցությունը կրելու է շարունակական բնույթ, ուստի սքանավորման արդյունքները կնպաստեն նաեւ Մատենադարանի ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը: Քանի որ միջոցառմանը ներկա էին նաեւ գործընկեր թանգարանների ղեկավարները, Խզմալյանն ընդգծեց, որ սարքը ծառայելու է ոչ միայն Մատենադարանին, այլեւ, ըստ անհրաժեշտության, հայաստանյան թանգարաններում պահվող տարբեր նմուշների սքանավորման գործին:

Մատենադարանի արխիվի եւ արխիվագիտության բաժնի վարիչ Արմեն Մալխասյանն անդրադարձավ հայ տպագրության ոլորտում միջնադարյան ժամանակահատվածի եւ ավելի վաղ շրջանի ձեռագիր գրքերի կազմարարական աշխատանքներին, դրանց կազմման մեթոդաբանությանն ու եղանակներին: Մալխասյանը ներկայացրեց Մատենադարանում պահվող մեծարժեք այն գրքերի նախնական շարքը, որոնց կազմերը շուտով կենթարկվեն 3D ձեւաչափով սքանավորման, եւ հավելեց, որ այդ գործընթացի շնորհիվ էապես կմեծանա ձեռագրերի կազմերի ուսումնասիրման առանձնահատկությունների որոշարկման, ինչպես նաեւ հավանական վնասվածքների բացահայտման հնարավորությունը:

Մատենադարանի տնօրենի խորհրդական, նորագույն տեխնոլոգիաների եւ թվայնացման բաժնի վարիչ Գուրգեն Գասպարյանն էլ անդրադարձավ հաստատության թվային ռազմավարությանը եւ սարքի կիրառելիության հեռանկարներին: Գասպարյանը տեղեկացրեց, որ բուն թվայնացման աշխատանքներն իրենց մոտ սկսվել են 2008 թվականից, եւ առ այսօր բաժինն արդեն հագեցված է ժամանակակից սարքավորումներով, որոնք հնարավորություն տվեցին թվայնացում իրականացնել չորս ուղղություններով:

Արդեն իսկ նկարվել է 3 միլիոն 700 հազար թվային պատկեր: Թվայնացվել են նաեւ արխիվային վավերագրերը (մոտ 160 հազար միավոր): Միկրոֆիլմերի թվայնացումը նույնպես կարեւոր ուղղություններից է: Շտեմարանը ձեւավորվել է տարիների ընթացքում, որն անչափ օգտակար է գիտնականներին: Վերջին տարիներին համագործակցելով Համբուրգի համալսարանի հետ՝ Մատենադարանն իրականացնում է կրկնագիր ձեռագրերի թվայնացում: Սքանավորման սարքի միջոցով կստացվեն մաքուր պատկերներ, որոնք հետազոտողներին հնարավորություն կտան նոր խնդիրներ ու թեմաներ առաջադրել: Եռաչափ սքանավորման դեպքում կազմերի բոլոր նրբությունները հստակ երեւակվում են, եւ ստացված պատկերները կարող են ուսումնասիրվել բազմակողմանիորեն: Սքանավորումից հետո ստացված տվյալներն ընդգրկվելու են ընդհանուր բազայում եւ որոնման համակարգում, ստեղծվելու են ֆայլեր, որոնք պահվելու են համապատասխան սերվերներում: Ցանկացած թվայնացված ձեռագիր կամ կազմ այլեւս դուրս չի գալու պահոցից, ուսումնասիրողը կարող է ուսումնասիրել դրա թվային պատկերը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՏՎՅԱԼՆԵՐ

8 ՄԼՆ 116 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստան նախորդ տարի ուղարկվել է 35 մլն 649.1 հազար դոլարի մարդասիրական օգնություն: Ամենամեծ ծավալի մարդասիրական օգնություն ուղարկած երկիրը Ամերիկայի Միացյալ Նահանգներն է, հաջորդում են Իտալիան ու Շվեյցարիան:

Այս մասին են փաստում Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները:

2023-ին Հայաստան ուղարկված մարդասիրական օգնության ծավալը 58.8 տոկոսով նվազել է 2022-ի նկատմամբ:

Նախորդ տարի ուղարկված մարդասիրական օգնության առյուծի բաժինը՝ 25 մլն 228.8 հազար դոլարը, կազմում է քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը: Ծավալով երկրորդ տեղում են մեքենաներ, սարքավորումներ եւ մեխանիզմները՝ 2 մլն 234.9 հազար դոլարի: Երրորդը մանածագործական իրերն են՝ 2 մլն 131.8 հազար դոլարի: Հայաստանը ստացել է նաեւ տարբեր արդյունաբերական ապրանքներ, սարքեր ու ապարատներ եւ այլ ապրանքներ:

Ինչ վերաբերում է երկրներին, ապա 2023-ին Հայաստանն ամենամեծ ծավալի մարդասիրական օգնություն է ստացել Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ 8 մլն 116 հազար դոլարի, որը կազմում է ստացված ամբողջ օգնության 22.8 տոկոսը, սակայն 2022-ի նկատմամբ ծավալը նվազել է 69.5 տոկոսով: Ուղարկած մարդասիրական օգնության ծավալներով երկրորդ տեղում է Իտալիան՝ 3 մլն 873.7 հազար դոլարով, 2022-ի նկատմամբ այն 4 անգամ ավելի շատ է: Երրորդ տեղում Շվեյցարիան է՝ 2 մլն 854.6 հազար դոլար ծավալով. 2022-ի նկատմամբ այն նվազել է 32.7 տոկոսով:

Հաջորդում են Գերմանիան՝ 2 մլն 144.3 հազար դոլար ծավալով, ապա Չինաստանը՝ 1 մլն 882.3 հազար դոլարով, Ֆրանսիան՝ 1 մլն 343.9 հազար դոլարով:

Ընդհանուր առմամբ ուղարկված մարդասիրական օգնության 46.8 տոկոսը բաժին է ընկել ԵՄ երկրներին, ԱՊՀ երկրներին՝ ընդամենը 0.1 տոկոսը, իսկ այլ երկրներին՝ 63.1 տոկոսը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արտյոմ Նորայրի Մակարյանս (ծնվ. 12.10.1994թ.) հունվարի 30-ին Աբովյան 20 հասցեի շրջակայքում կորցրել եմ «Երեւանի թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ավարտական դիպլոմս՝ N015500:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԿՈՐՈՒՍ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԻ ՊԱՀԱՊԱՆԸ

«Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, մշակութաբան, հասարակական գործիչ Գագիկ Գինոսյանի հոգեհանգստի արարողությունը տեղի ունեցավ փետրվարի 8-ին՝ ժամը 17:00-20:00-ն, Նոր-նորքի 5-րդ զանգվածում գտնվող Սուրբ Սարգիս եկեղեցում, վերջին հրաժեշտը՝ փետրվարի 9-ին՝ ժամը 11:00-13:00-ն, Կամերային երաժշտության տանը: Նույն օրը հուղարկավորության արարողությունը տեղի կունենա ժամը 14:00-ին Եռաբլուրում: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում տեղեկացրել է Գագիկ Գինոսյանի դուստրը՝ Ծովինար Գինոսյանը:



Փետրվարի 6-ին 58 տարեկանում կյանքից հեռացել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, ազգագրական պարերի մասնագետ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Գեղարվեստական դաստիարակության եւ մշակույթի մանկապատանեկան կենտրոնի» պարուսույց, «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր եւ ղեկավար Գագիկ Մարտիրոսի Գինոսյանը:

Գագիկ Մարտիրոսի Գինոսյանը ծնվել է 1966 թվականի օգոստոսի 3-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում:

1982 թվականին ավարտելով Ախալցխայի N3 հայկական միջնակարգ դպրոցը՝ աշխատանքի է անցել Ախալցխայի շարժական մեխանիզացված շարասյունում՝ որպես բանվոր:

Նույն թվականին ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Տեխնիկական կիբեռնետիկա» ֆակուլտետի «Ավտոմատիկա եւ հեռուստամեխանիկա» բաժինը, որն ավարտել է 1990 թվականին:

1987 թվականից Գագիկ Գինոսյանը սկսել է պարել Հայրիկ Մուրադյանի հիմնադրած «Վան» ազգագրական խմբում:

1996-1999 թվականներին աշխատել է Գյումրու «Շանթ» հեռուստառադիոընկերության երեւանյան գրասենյակում՝ որպես տնօրեն:

2001 թվականին Գագիկ Գինոսյանը հիմնադրել է «Ծովակ» եւ «Կարին» ավանդական երգի-պարի խմբերը:

2011 թվականին «Ազգային պարարվեստի զարգացման եւ տարածման գործում ունեցած զգալի ավանդի համար» Գագիկ Գինոսյանը պարգեւատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

2007 թվականին հիմնել է «Ազգագրության թատրոնը» եւ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ՝ «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հետ բեմադրել իր հեղինակած եւ Հայրիկ Մուրադյանին նվիրված «Հայոց երգի հայրիկը», «Խնկահոտ Էրգիր» եւ «Վարք հայոց» ներկայացումները:

2014 թվականին բեմադրել է «Խաչ պատերազմի» հեղինակային ներկայացումը:

Ավանդական երգերի եւ պարերի պահպանման, մշակման եւ հանրայնացման նպատակով հիմնադրել է «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը:

Պետական աջակցությամբ հեղինակել է «Ազգային երգ ու պար» առարկայական ծրագիրը, որը տարիներ շարունակ ուսուցանվել է հանրակրթական դպրոցներում:

Երկար տարիներ զբաղվել է բանահավաքչական գործունեությամբ: Գրի է առել բազում պարերի նկարագրություններ եւ վերականգնել 36 ազգային պար, որոնց առաջին կատարողն է եղել «Կարին» համույթը:

Հայաստանի անկախության 20-ամյակի կապակցությամբ Գագիկ Գինոսյանը ՀՀ նախագահի հրամանագրով արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչմանը:

Մասնակցել է Արցախյան պատերազմին:

2006 թվականին լույս է տեսել Գագիկ Գինոսյանի անդրանիկ «Ողջո՛ւյն, տղե՛րք» գիրքը, որում ընդգրկված են հեղինակի արձակ բանաստեղծությունները, աֆորիզմները, ինչպես նաեւ հրապարակախոսական հոդվածներն ու նյութերը՝ արցախյան պատերազմի մասին:

Գագիկ Գինոսյանը տարբեր տարիների արժանացել է ՀՀ պետական, գերատեսչական պարգեւների:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՄԵՐ ՈՒ ԲՈԼՈՐԻ ՓԱՐԱՋԱՆՈՎԸ»

Կինոռեժիսոր, սցենարիստ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սերգեյ Փարաջանովի՝ այս տարի նշվող 100-ամյա հոբելյանի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, Սերգեյ Փարաջանովի թանգարանը եւ Հայաստանի ազգային կինոկենտրոնը հայտարարել էին մրցույթ՝ «Մեր ու բոլորի Փարաջանովը» խորագրով: Այն նախատեսված էր դպրոցների (8-12-րդ դասարաններ) եւ նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար: Մրցույթի նպատակն էր մեծանուն արվեստագետի ժառանգության հանրահռչակումը, դասանիներին ու երիտասարդներին այն առավել ճանաչելի դարձնելը:

Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված մրցույթի շրջանակում հրապարակված 7 հարցերի մեկնաբանություններում ավելի քան 1200 սովորողներ գրել են պատասխանի իրենց տարբերակները:

Ըստ աղբյուրի՝ հունվարի 30-ից փետրվարի 5-ը՝ յուրաքանչյուր օր, ԿԳՄՍ նախարարության ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել են Սերգեյ Փարաջանովի կյանքին, ստեղծագործությանը վերաբերող տարաբնույթ հարցեր, եւ համաձայն մրցութային պայմանների՝ առաջինը ճիշտ պատասխանողը ճանաչվել է տվյալ օրվա հաղթող: Խմբագրված, ինչպես նաեւ այլ օգտատերերի ֆեյսբուքյան էջերից հրապարակված պատասխանները չեն դիտարկվել: Որպես պարտադիր պահանջ՝ պատասխանում պետք էր նշել սովորողի տվյալները (անուն, ազգանուն, մարզ, քաղաք/գյուղ, ուսումնական հաստատություն, դասարան/կուրս, մասնագիտություն): Հարցերին առաջինը ճիշտ պատասխանած մասնակիցներն են՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի հ. 1 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Գայանե Գրիգորյան,
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի հ. 2 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Միլենա Կռոյան,
3. Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջի «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» բաժնի ուսանող Լիլիթ Պետրոսյան,
4. ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Անժելա Դալլաքյան,
5. ՀՀ Տավուշի մարզի Բերդի հ. 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Նելի Ներսիսյան,
6. Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի ուսանող Մարինե Ստեփանյան,
7. Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջի «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր եւ ցանցեր» բաժնի ուսանող Արմեն Հակոբյան:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՄԵԿՆԵՆ ՍՏԱՄԲՈՒԼ

Հայաստանի աթլետիկայի հավաքականի անդամները կմեկնեն Ստամբուլ, որտեղ կմասնակցեն Բալկանյան երկրների ձմեռային առաջնությանը:

Հավաքականի կազմում ընդգրկված են եռացատկորդներ Լեւոն Աղասյանն ու Գոռ Հովակիմյանը, վազորդներ Երվանդ Մկրտչյանը, Ռոման Ալեքսանյանը, Էլլադա Ալավերդյանը, Գայանե Չիլոյանը, հեռացատկորդներ Յանա Սարգսյանը եւ Գոռ Բեգլարյանը: Աթլետները մրցավայր կմեկնեն Գրիգոր Բարսեղյանիեւ Արսեն Պետրոսյանի գլխավորությամբ: Համապատասխան արդյունքներ ցույց տալու դեպքում հայ մարզիկներն իրավունք կստանան մասնակցելու նաեւ Գլազգոյի փակ մարզասրահում մարտի 1-3-ը անցկացվելիք աշխարհի ձմեռային վարկանիշային առաջնությանը:

ԽԱՂԵՐԻ ՄԵԴԱԼՆԵՐԸ

Փարիզի ամառային օլիմպիական խաղերի կազմակերպիչները ներկայացրել են խաղերի մեդալները:

Այս մասին հայտնում է խաղերի կազմկոմիտեն: Օլիմպիական խաղերի մեդալներն ամբողջացնում են ֆրանսիական եւ փարիզյան ստեղծագործ միտքը, իսկ յուրաքանչյուր մեդալ էյֆելյան աշտարակից մի կտոր կունենա, որը կլինի մեդալի կենտրոնում:

Նրանց դիզայնի յուրաքանչյուր տարր արտացոլում է 2024 թվականի Փարիզի օլիմպիական եւ պարալիմպիկ խաղերի ինքնության մի մասը:

ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐՈՒՄ

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում փետրվարի 8-ին՝ ժամը 21:00-ին (Երեւանի ժամանակով) կայացավ ՈՒԵՖԱ Ազգերի Լիգա 2024/25 թվականների մրցաշարի վիճակահանությունը:

ՈՒԵՖԱ-ի անդամ 54 երկրները բաժանված են 4 լիգաների՝ հաշվի առնելով 2022/23 թվականների արդյունքները:

A, B եւ C լիգաների վիճակահանության արդյունքում կկազմավորվի չորս թիմից բաղկացած չորս խումբ: Յուրաքանչյուր թիմ իր խմբում կանցկացնի 6 հանդիպում:

D լիգայի վիճակահանությամբ կձեւավորվի երեք թիմից բաղկացած երկու խումբ: Յուրաքանչյուր թիմ իր խմբում կանցկացնի 4 հանդիպում:

Հայաստանի ազգային հավաքականն ընդգրկված է C լիգայում:

Զամբյուղ 1
Ռումինիա, Շվեդիա, Հայաստան, Լյուքսեմբուրգ

Զամբյուղ 2
Ադրբեջան, Կոսովո, Բուլղարիա, Ֆարերյան կղզիներ

Զամբյուղ 3
Հյուսիսային Մակեդոնիա, Սլովակիա, Հյուսիսային Իռլանդիա, Կիպրոս

Զամբյուղ 4
Բելառուս, Լիտվա/Ջիբրալթար, Էստոնիա, Լատվիա

ՈՒԵՖԱ-ի որոշմամբ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի հավաքականները չեն կարող ընդգրկվել միեւնույն խմբում:

● *Մարտի 5-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա ««Զարթոնք». Պարույր Սեւակ-100» գրական-երաժշտական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Եթե լրացել է անձի՝ կենսաթոշակի անցնելու տարիքը, ապա դիմում ներկայացնելու համար նա ի՞նչ պետք է անի եւ ո՞ւր ներկայանա:

Լաուրա Խաչատրյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կեսաթոշակ նշանակող մարմին:

Այսպես, տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,

2) անձը հաստատող փաստաթուղթը,

3) հանրային ծառայությունների համարանիշը,

4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),

5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,

6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը այլ անձի հանձնելու դեպքում ինչ չափով տուգանք է առաջադրվում:

Գրիշ Մարտիրոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Մարտիրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 198 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց մաքսային մարմնի թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100,000 դրամի չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Օքլենդ քաղաքում սեւամորթ տղամարդը ներխուժել է Apple Store եւ 49 iPhone գողացել: Խանութի աշխատակիցներն ու հաճախորդները ապշած հետեւել են նրան, եւ ոչ ոք չի փորձել կանգնեցնել կողոպտչին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 4 - 7	+ 3 + 6
Կոտայքի լեռներ	0 - 2	+ 3 + 6
Կոտայքի նախալեռներ	0 - 2	+ 8 + 11
Գեղարքունիք	- 1 - 6	+ 3 + 7
Լոռի	0 + 5	+12 + 16
Տավուշ	+ 3 + 7	+16 + 20
Արագածոտնի լեռներ	- 4 - 7	+ 3 + 5
Արագածոտնի նախալեռներ	0 - 2	+ 8 + 13
Արարատ	0 + 2	+13 + 15
Արմավիր	0 + 2	+12 + 14
Վայոց ձորի լեռներ	- 3 - 5	+ 3 + 5
Վայոց ձորի նախալեռներ	0 + 2	+13 + 15
Սյունիքի հովիտներ	+ 6 + 10	+16 + 20
Սյունիքի նախալեռներ	0 + 4	+10 + 15
ԼՂՀ	+ 2 + 4	+10 + 14
Երեւան	+ 6 + 9	+12 + 14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*